

1906 թվականին Կոմիտասն ուղևորվեց Փարիզ՝ մասնակցելու երգի մեծ փառատոնին: Փարիզը փորձաքար էր նրանց համար, ովքեր եկել էին համաշխարհային անուն ձեռք բերելու ակնկալիքով: Երաժշտական հրավառություններից շփացած քաղաքը, ուր ժամանել էր Կոմիտասը, ինչպես և կընդուներ մի անհայտ ժողովրդի անհայտ զավակին:

Բեմ էին ելնում անվանի երգիչներ, որոնց ելույթներն ուղեկցվում էին ջերմ ծափերով:

Դահլիճը մի պահ պապանձվեց. բեմին երևաց մի այր՝ սքեմով և վեղարով: Ինչ էր անելու նա, ինչպես և պիտի դիմանար աստղային այդ մրցակցությանը:

Մրտի տրոփյունով, սակայն արտաքուստ հանգիստ՝ Կոմիտասը կանգնեց դաշնամուրի մոտ: Ու կարկաչեց երգը... Մեղմահնչյուն, թավշային թրթիռով դողանջում էր երգը, որից ասես արցունք էր կաթում՝ պատմելով իր վշտահար ժողովրդի մասին:

Դահլիճը լուռ էր. կարծես նիրհ էր իջել ամենքի վրա: Բայց կարճ մի ակնթարթ, ու սկսվեց ծափերի տեղատարափը:

Իսկ երբ բեմ բարձրացավ երգահան Կլոդ Դեբյուսին, որ ֆրանսիացիների պաշտամունքն էր, ու ծնկի եկավ Կոմիտասի առաջ, դահլիճն իսկույն համրացավ:

Երգահանն ասաց.

- Հա՛յր Կոմիտաս, իմ հայրենակիցները, ինչպես տեսնում ես, հիացած են քեզնով, իսկ իմ կողմից ընդունի՛ր խոնարհումս քո հանճարի առջև:

1. Տեքստում գտի՛ր տրված բառերի հոմանիշները՝ **խոխոջալ, քանքար, որոտընդոստ, հղփանալ, կարկամել, երնելի, պարեգոտ, բաբախ, համբավ, կնգուղ:**

(3 միավոր)

2. Բնագրից դո՛ւրս գրի՛ր հարաբերական 5 դերանուն, նշի՛ր շարահյուսական պաշտոնները:

(3 միավոր)

3. Փոխակերպի՛ր թավ գրված նախադասությունները: Նշի՛ր ստորադաս նախադասության բնույթը:

(4 միավոր)

4. Գրի՛ր չորս դարձվածք **սիրտ** բառով և բացատրի՛ր:

(2 միավոր)

5. Կազմի՛ր բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ **թե** շաղկապով:

(2 միավոր)

6. Գրի՛ր նամակ սփյուռքում ապրող քո հասակակցին (երկու էջի սահմաններում):

(6 միավոր)